# ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԽԱՂԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ

## 1. Ընդհանուր դրույթներ

1.1. Գովազդային վիճակախաղը կազմակերպվում է «ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի (այսուհետ՝ Կազմակերպիչ կամ Կազմակերպություն) կողմից՝ գովազդային նպատակներով մրցանակների խաղարկության միջոցով:
1.2. Խաղարկությանը մասնակցելով՝ մասնակիցը հաստատում է, որ ծանոթացել է, ընդունում և համաձայնում է սույն պայմաններին և կանոններին:

## 2. Գովազդային վիճակախաղի պայմաններ

2.1. Խաղարկությանը կարող են մասնակցել բոլոր այն հաճախորդները, որոնք Կազմակերպչի Cashme GC հավելվածով 2025 թվականի նոյեմբերի 21-ից (Երևանի ժամանակով ժամը 00:00-ից) մինչև 2026 թվականի փետրվարի 28-ը (Երևանի ժամանակով 23:59) կդիմեն և կստանան 160,000 ՀՀ դրամ և ավելի գումարով՝ նոր առանց գրավի վարկ, որը կգործի առնվազն 10 օր: Մի քանի վարկ ստանալու դեպքում յուրաքանչյուր վարկը, որի գումարը նվազագույնը 160,000 ՀՀ դրամ է, համարվում է մեկ առանձին մասնակցություն:

2.2. Կլինեն հետևյալ մրցանակները՝

- 3 հատ iPhone 17 Pro Max

## 3. Խաղարկություն

3.1. Խաղարկությունը տեղի կունենա 2026թ. մարտի 11-ին՝ Կազմակերպչի կողմից նախապես հայտարարված ժամին:
3.2. Հաղթողները որոշվելու են պատահականության սկզբունքով:
3.3. Խաղարկությունը հեռարձակվելու է ուղիղ եթերում՝ Կազմակերպության ինստագրամյան պաշտոնական էջում (https://www.instagram.com/cashme.am/): Հաղթողները որոշվելու են պատահականության սկզբունքով՝ ընտրելով 3 շահող պայմանագրային համար այն բոլոր վարկային պայմանագրերի համարներից, որոնք համապատասխանում են սույն կանոններով սահմանված մասնակցության պայմաններին:
3.4. Ուղիղ եթերի ընթացքում, անձնական տվյալների պաշտպանության նկատառումներով, հայտարարվելու է հաղթող մասնակցի վարկային պայմանագրի վերջին 4 թիվը և/կամ մասնակցի անվան և ազգանվան սկզբնատառերը:
3.5. Ընտրությունից հետո կապ կհաստատվի տվյալ վարկի վարկառուի՝ Կազմակերպությունում գրանցված հիմնական հեռախոսահամարով: Զանգին

չպատասխանելու դեպքում կկատարվի զանգահարելու ևս 2 փորձ՝ յուրաքանչյուր զանգի ընթացքում սպասելով առնվազն 15 վայրկյան: Եթե երեք (3) փորձից հետո ևս կապ չհաստատվի, ապա կընտրվի նոր պատահական վարկային պայմանագրի համար: Ընդ որում, յուրաքանչյուր վարկային պայմանագրի համար կարող է մասնակցել ընտրությանը միայն մեկ անգամ: Կապ հաստատելու բոլոր փորձերը կիրականացվեն ուղիղ եթերում:

3.6. Հաղթող մասնակիցը պարտավորվում է մրցանակը ստանալ 30 օրացուցային օրվա ընթացքում:

3.7. Այն դեպքերում, երբ հաղթող մասնակիցը 30 օրացուցային օրվա ընթացքում չի մոտենում մրցանակը ստանալու համար, Կազմակերպիչը իրավունք է ստանում տնօրինելու մրցանակն իր հայեցողությամբ:

## 4. Լրացուցիչ դրույթներ

4.1. Մրցանակները տրամադրվելու են անձը հաստատող փաստաթուղթ ներկայացնելու դեպքում:

4.2. Հաղթող մասնակիցը նոտարական կարգով հաստատված լիազորագրով կարող է լիազորել այլ անձի՝ մրցանակն իր անունից ստանալու համար:

4.3. Մրցանակները դրամական միջոցներով փոխարինելու հնարավորություն չի տրամադրվում:

4.4. Հաղթող մասնակիցը, սույն պայմաններին և կանոններին համապատասխան, տալիս է իր համաձայնությունը լուսանկարահանվելու Կազմակերպության սոցիալական հարթակների էջերում հրապարակման համար: